

Սակայն Աստրախանի հայերը չէին կորցնում տպարանը վերականգնելու իրենց հույսերը: 1815 թ. նրանք օգնեցին գիմնազիայի ուսուցիչ Վեյսկհոպֆենին՝ մի նոր հայկական տպագրական մամուլ ստեղծելու գործում, որի շնորհիվ Վեյսկհոպֆենին հաջողվեց 1815 թ. հրատարակել «Ռուս-հայերեն ալբերենարան», իսկ 1816 թ. տպագրել «Արևելյան ծանուցմունք»-ի հայկական օրինակները⁵⁰:

1816 թ. Վեյսկհոպֆենը վախճանվեց, բայց երկու տարի հետո հաջողվեց վերականգնել հայկական հին (եալգուրյանի) տպարանը: 1818-ից մինչև 1832 թ. Ն. Ֆ. Լեոնտի տվյալներով, այդտեղ տպագրվել է ութ գիրք⁵¹: Այսպիսով, Ռուսաստանի առաջին հայկական տպարանը շարունակում էր իր կուլտուր-լուսավորական և հայրենասիրական գործունեությունը, չնայած որ Անդրկովկասի՝ Ռուսաստանին միանալուց հետո տպարանն այլևս այն դերը չէր կատարում, ինչ XVIII դ. երկրորդ կեսին, երբ հանդիսանում էր հայ ժողովրդի՝ իր ազգային ինքնությունությունը պահպանելու համար մղած պայքարի ամփոփական գործիք:

Աստրախանի հայերի մշակութային կյանքը ցույց տվող վերոհիշյալ փաստերը թույլ են տալիս եզրակացնել, որ XVIII դարում Աստրախանի հայ բնակչությունը ապրում էր ողջ հայ ժողովրդի համար միանական հոգևոր կյանքով, զգում էր, որ ինքն այդ ժողովրդի մի անբաժան մասնիկն է:

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

ՀԱՅ-ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ՀԱՐԱՐՆԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ ՆՈՐ ՓԱՍՏ (VII ԴԱՐ)

VII դարը Բյուզանդիայի պատմության ամենաճակատագրական շրջաններից մեկն է: Այս դարում սկսված արարական արշավանքները հարցականի տակ դրեցին Բյուզանդական կայսրության գոյությունը: 636—653 թթ. ընթացքում արաբները գրեթե ամեն տարի զրավում էին մեկական բյուզանդական տերիտորիա՝ Սիրիա (636), Երուսաղեմ (637), Անտիոք (638), Մեսոպոտամիա (639), Եգիպտոս (640—642), Կիրենաիկա, Տրիպոլիտանիա (642—643), Հյուսիսային Աֆրիկա (647), Փոքր Ասիա (651), Հայաստան (653)¹:

Հայաստանը, ի տարրերություն մյուսների, արարական խալիֆաթի գերիշխանությունն ընդունեց մի կամավոր պայմանագրով, որը նրան ապահովում էր բացառիկ նպաստավոր պայմաններ² և տալիս էր գրեթե ավելի շատ արտոնություններ, քան տվել էին բյուզանդացիները: Այս ձևով զաշինքը զուլա քերեց ժամանակի խոշոր քաղաքական և ռազմական գործիչ, Հայոց պատրիկ Թեոդորոս Ռշտունին³, որը արաբների իշխանությունն ընդունելուց հետո էլ շա-

50 Տե՛ս Վ. Ոսկանյան և Վ. Երիզորյան, Ռուսահայոց առաջին պարբերական «Արևելյան ծանուցմունք»-ը, «Սովետական գրականություն», 1957, № 3:

51 Տե՛ս «Список книг, брошюр и периодических изданий, печатавшихся в астраханских типографиях», Астрахань, 1869:

¹ III. Диль, История Византийской империи. Перевод с французского А. Е. Пергинской, Москва, 1948, էջ 46—49:

² А. Müller. Der Islam im Morgen- und Abendland, I Bd., Berlin, 1885, էջ 261: Նաև՝ Հակոբ Մանանդյան, Դննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Բ, Բ մասի նյութեր, Երևան, 1960, էջ 221:

³ Թեոփանեսի Chronographia-յում (vol. I, Bonnae, MDCCCXXXIX=1839, էջ 527) Թեոդորոս Ռշտունու անվան փոխարեն կարդում ենք Παταρχαδης (Παταρχαδης ὁ τῶν Ἀρμενίων πατριχης): Մեզ թվում է, սա արդյունք է գրչական թյուրիմացության: Παταρχαδης անունով հայկական պատրիկ գոյություն չի ունեցել (առհասարակ παταρχαδης անուն գոյություն չունի): Թեոփանեսն ինքը նշում է կոստանդին II կայսեր ժամանակ կնքված միայն մեկ հայ-արարական պայմանագիր: Ուրեմն՝ նա ինքը ժխտում է երկրորդ զաշինքի (հետևաբար նաև՝ երկրորդ հայ պատրիկի) գոյությունը: Պետք է ենթադրել, որ Թեոփանեսը նույնպես նկատի է ունեցնել Թեոդորոս Ռշտունուն, բայց այս պատրիկի անունը գրե-

րունակեց մնալ Հայաստանի կառավարիչն ու սպարապետը Թեոդորոս Ռշտունին Անդրկովկասյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների նշանավոր ղեկավարներից մեկն էր և ղեկավարում էր Քյուզանդիայի կայսր Կոնստանդ 11-ը (642—668) նրան նշանակել էր Հայաստանի գործերի զուլավար և տվել էր պատրիկոթյան պատիվը։ Հետագայում նա դարձավ նաև Վրաստանի և Աղվանից աշխարհի գլխավոր կուսակալը։ Բարձր դիրքն ու ազդեցությունը նա օգտագործում էր Անդրկովկասի ներքին ինքնավարությունը պահպանելու համար և իր դործողություններով անհանգստացնում էր մերթ րյուզանդացիներին, մերթ արարներին։ Արարների՝ Հայաստան կատարած արշավանքների ժամանակ նա բազմիցս համախմբել է երկրի ուժերը և դիմադրել նվաճողներին, հաճախ պարտության մատնելով նրանց։ Իսկ երբ նա ապստամբել էր Քյուզանդական կայսրության դեմ, նրա հետ միասին դործում էին նաև Վրաց, Աղվանից և Սյունյաց երկրները։

Թեոդորոս Ռշտունու դործունեության մեջ ամենամեծ տեղ է գրավում 653 թ. կնքված վերոհիշյալ հայ-արարական պայմանագիրը։ Հմուտ զորավար տեսնելով, որ արարները հաղթեցին Նույնիսկ ժամանակի ամենամեծ աշխարհակալ տերություններից մեկին՝ Պարսկաստանին և ծնկի էին բերում Քյուզանդական կայսրության նման մի հզոր տերություն, անիմաստ համարեց Հայաստանի հետագա դիմադրությունը և դաշինք կնքեց արարների հետ։ Դրանով նա հնարավորություն ձեռք բերեց կանխելու հետագա կոտորածները և պահպանելու Հայաստանի ներքին ինքնավարությունը։ «Այս համաձայնությունը շատ նշանավոր մի քաղաքագիտական դործ էր... Դաշնակցել մի մահմեդական պետության հետ ընդդեմ քրիստոնյա պետության իմա Քյուզանդիայի—Ե. Ա.), այս մի շատ խիզախ ձեռնարկ էր, որի նմանը հայոց պատմության մեջ շատ քիչ է կրկնվել...»⁴։

Հանձին Հայաստանի՝ Քյուզանդական կայսրությունը Անդրկովկասում կորցնում էր իր ամենագործունյա զինակցին, որն այժմ ուժերը տրամադրելու էր հակառակորդին։ Այս աղետարեն կորուստը կանխելու համար Կոնստանդ կայսրը դիմել է զանազան միջոցառումների, որոնցից ամենագլխավորը հայտնի է դառնում միայն այժմ։

Սույն հոդվածում առաջին անգամ ներկայացվող այդ փաստի հիշատակությունը պահպանվել է VII դարում գրված «Սերետի Պատմությունում», որը դեպքի ժամանակակից հազվագեյ սկզբնաղբյուրներից մեկն է։ Այստեղից իմանում ենք, որ Քյուզանդիայի կայսր Կոնստանդ 11-ը արարների դեմ միասնական գործողություններ ձեռնարկելու նպատակով դիմել է Հայոց զորավար Թեոդորոս Ռշտունուն հետևյալ առաջարկով. «Ես գամ ի կարող քաղաք և դուք գաք առ իս։ Եվ կամ՝ ես գամ առ ձեզ և տամ ձեզ աղնություն հողի և խորհիմք ի միասին, եթե զինչ արժանիք է առնել»⁵։

Այս հասկացումը հանդիպում է հայերենին անծանոթ հոռոյի բառը։ Կոնստանդ 11-ը Թեոդորոս Ռշտունուն և մյուս հայ իշխաններին խոստանում է «տալ օգնություն հոռոյի»։ Ինչ էլ այս հոռոյի—ն։ Գծագրական տեսքով սա հիշեցնում է հոռո բառը, որը նշանակում է «ոռնիկ», «օրապահիկ»։ Այս արտաքին նմանությունից ելնելով, մասնագետները նույնացրել են հոռոյի և հոռոյ բառերը և ենթադրել, թե Կոնստանդ 11-ը հայ զորավարին և իշխաններին խոստացել է տալ ոռնիկ կամ օրապահիկ։

Այդպես են վերծանել ընագիրը նաև «Սերետի Պատմության» թարգմանիչները։ Գերմանացի գիտնական Հ. Հյուբշմանը թարգմանել է. „unterstütze euch durch Sold“⁶

լու փոխարեն նրան կոչել է «ուխտագանց», «ղավաճան» մականվամբ, որը հունարեն կլի—ներ πειραχτης։ Հայտնի է, որ Թեոդորոս Ռշտունուն պատրիկոթյան պատիվը տվել էր Կոնստանդ 11-ը։ Եվ քանի որ Ռշտունին ապստամբեց հենց այս միևնույն Կոնստանդի դեմ և անցավ մահմեդական արարների կողմը, Քյուզանդացիները նրան զրկեցին պատրիկոթյան պատվից և հրապարակորեն հռչակեցին «ուխտագանց»՝ πειραχτης։ Հավանաբար այս բառի աղճատումից էլ առաջացել է πειραχτης—ը։ Պալեոգրաֆիկ առումով այս բառերի շփոթը շատ հնարավոր է։ Πα(ς)α(ς) (> γ.)α(ς)։ Ամականը ընկալելով որպես հատուկ անուն, հետագա դրիչները այդ անվան հետ հարմարեցրել են նաև նախադասության մյուս անդամները։

⁴ Է. Ե. Ռ., Հայոց պատմություն, հատ. 2, Երևան, 1947, էջ 323։

⁵ «Սերետի եպիսկոպոսի Պատմություն», շորրորդ տպագրություն, բաղադրություններով ձեռագրաց, հանդերձ առաջարանի և ծանոթագրություններով ձեռն Ստ. Մախասեանց, Երևան, 1939, էջ 141։

⁶ H. Hubschmann, Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber, Aus dem Armenischen des Sebeos, Leipzig, 1875, էջ 31։

(«ձեզ կօգնեմ թողակով»), ֆրանսիացի հայագետ Ֆ. Մակլերը՝ «Je vous assisterai par une solde»⁷ (նույնը), ակադեմիկոս Ստ. Մալխասյանը՝ «Ям вам средства на содержание»⁸։

Բրականում, սակայն, բնագրից երևում է, որ բյուզանդացի կայսրը հայերին առաջարկել է ոչ թե տնտեսական, այլ ռազմական օգնություն՝ Այս առումով պրոֆ. Ք. Պատկանյանի թարգմանությունը համեմատաբար ավելի մոտ է կանգնած բնագրին «Ям вам сильную помощь»⁹։

Կոնստանդ 11-ր բանակցությունները վարում էր Հայոց սպարապետի և ամենանշանավոր իշխանների հետ, որոնք, ինչպես ասվեց, հայ-արարական պայմանագրի համաձայն պահպանել էին իրենց ինքնավարությունը և մնացել էին երկրի տերը։ Այսպիսի հարուստ իշխանների թողակ առաջարկելը պարզապես կենանակեր թեթևամտություն, որն անսպասելի էր կայսրից։

Հիշենք արարների ստանձնած պարտականությունները ըստ հայ-արարական պայմանագրի. «Այս լիցի ուխտ հաշտության իմոյ ընդ իս և ընդ Աեզ՝ որչափ ամաց և դուր կամիցիր, և ոչ առնում ի ձենդ սակ զերեւմ մի. ապա յայնժամ տալիք երդմամբ, որչափ և դուր կամիցիր. Եւ հեծեալ կալէք յաշխարհիդ ժն հազար և հաց յաշխարհէն տար, և ես ի սակն արքունի անդարեւմ. և զհեծեալսն զԱսորիս ոչ խնդրեմ... և ոչ արձակեմ ի բերդորայն ամիրայս, և ոչ տաճիկ սպայ՝ ի ռազմաց մինչև ցմի հեծեալ։ Թշնամի մի մտցի ի Հայս. և եթէ գայ Հոռում ի վերայ ձեր՝ արձակեմ ձեզ զարս յսուղնականութիւն՝ որչափ և դուր կամիցիր»¹⁰։ Նմանօրինակ արտոնությունների կողքին բյուզանդական կայսեր առաջարկած «թողակը» անշուշտ, չէր կարողանա հրապուրել հայ իշխաններին։ Այս պատճառով էլ հնարավոր չէ, որ բյուզանդացի կայսրը հայ իշխաններին թողակ առաջարկած լինի։

Պայմանագրից երևում է, որ Հայաստանն այնքան հարուստ էր, որ ի վիճակի էր ինքն «թողակավորել» ոչ միայն մի բանի հայ իշխանների, այլ 15-հազարանոց հայկական հեծելազորին («հեծեալ կալէք յաշխարհիդ ժն հազար, և հաց յաշխարհէն տար»)։ Այլ աղբյուրներից հայտնի է նաև, որ Հայաստանն արտահանում էր բնորոշ սննդամթերքներ։ Այնպես որ՝ հայ իշխանները կկարողանային սեփական հողում մի բան գտնել իրենց գոյությունը պահպանելու համար և չէին սպասի բյուզանդացի կայսեր թողակին։ Եվ բոլորովին հնարավոր էլ չէ, որ հայ իշխաններին թողակ տալու համար Հայաստան դար անձամբ ինքը՝ կայսրը («ես գամ առ ձեզ, և տամ ձեզ ազնութիւն հոռոյ»)։

Հետևաբար, «հոռոյի» բառն ակնհայտորեն աղավաղված մի բառ է։

Նրա իրական նշանակությունը բացահայտվում է նախորդ «տամ ձեզ օգնութիւն» արտահայտության միջոցով։ «Սերենոսի Պատմության» ամբողջ բնագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը «օգնություն» բառն ամենուրեք օգտագործում է «զորք» բառի հետ միասին։ Բնականաբար այդպես պետք է վարվել նաև հոռոյի բառը պարունակող հատվածում։ Ուրեմն աղճատված հոռոյի-ի փոխարեն պետք է որոնել սկզբնական բնագրի այն բառը, որը նույնպես արտահայտել է «զորք» հասկացությունը։

Նախքան այդ բերենք «օգնություն» և «զորք» բառերի գործածության մի բանի օրինակներ. «Տայր նոցա զգաւրսն կայսերական լաւնութիւն» (27)¹¹, և «արձակեա ինձ զաւր յաւգնութիւն» (36—37), «մատուցել զգաւրն լաւնութիւն» (44), «զաւրս բազումս յաւգնութիւն իւր» (67), «եթէ զաւր պիտոյ է՝ արձակեցից յաւգնութիւն» (99), «զաւրս գումարեալ արձակեսդ լաւնականութիւն նոցա» (107), «խնդրել ի բերդէն Դարանից զաւր յաւգնականութիւն իւրեանց» (118) և այլն։

Այսքան որոշակի փաստերից հետո կասկած չի մնում, որ «տամ ձեզ աւգնութիւն հոռոյի» արտահայտությունում հոռոյի բառի տակ թաքնված է «զաւրք» բառին փոխարինող մի արտահայտություն։ Դա է «Հիւ ոգի» («70.000 հոգի») արտահայտությունը։ Բյուզանդացի կայսրը

⁷ «Histoire d'Héraclius, par L'évêque Sebeos», trad. de l'arménien et annotée par Frédéric Macler, Paris, MDCCCIV (= 1904), էջ 133։

⁸ «История епископа Себеоса», пер. с четверт. исправ. армянского издания Ст. Малхасяна, Ереван, 1939, էջ 117։

⁹ «История императора Иракла», сочинение епископа Себеоса, писателя VII в., перевод с армянского К. Патканяна, С. Петербург, 1862, էջ 13։

¹⁰ «Սերենոսի Պատմություն», Երևան, 1939, էջ 140—141։

¹¹ Փակագծերում նշված են «Սերենոսի Պատմություն» (Երևան, 1939) համապատասխան էջերը։

խոստացել է Թեոդորոս Ռշտունուն տրամադրել 70.000 զինվոր, որոնք հայոց զորքի հետ միասին կովելու էին արարների դեմ:

Հայտնի է, որ հնագույն ձեռագրերում, տեղ և ժամանակ խնայելու նպատակով, բառերը գրվում էին միասին, իրարից չանջատված: Միասին գրված պետք է լինեին նաև «ՀԹ» և «ոգի» բառերը: Ընդօրինակող գրիչները հետագայում դրանք բնորոշելով որպես մեկ բառ աղավաղել են բնագիրը և առիթ տվել թյուրիմացության:

«Սերեոսի Պատմության» մեջ ՀԹ տառերը թվական առումով գործածված են նաև այլուհ: Որինակ՝ «սկսաւ գունդս կազմել իրրե ՀԹ և ետ նոցա զարաւարա»¹², «ան նաև ոգի» (= մարդ) բառի գործածության օրինակներ: Այսպես՝ «Եւ խաղացուցին զբազմութիւն գերւոյն և ի հազար եոզի»¹³, (հմտ. նաև՝ «երեսուն և հինգ հազար ոզի գերեցին»¹⁴), «զպատանդսն, զոր տարեաւ էին յերկրէն, ոզիս իրրե ՌԶԶԵ»¹⁵ և այլն: «Սերեոսի Պատմության» հեղինակը գիտե նաև գործածել «հոգ» բառը ճիշտ առումով՝ «բաշխէր (ե ոչ թե՛ սաւայր աւգնութիւն) զարացն հոգ» (և ոչ թե՛ հոգի), և ճաշ և բնթրիս»¹⁶:

Այսպիսով՝ «Սերեոսի Պատմության» սկզբնական բնագրում Կոնստանդ կայսեր առաջարկը պարունակող հատվածն ամբողջությամբ պետք է վերականգնել հետևյալ ձևով. «Ապա ասէ (Կոնստանդ կայսրը— Դ. Ա.) ես գամ ի Կարնոյ քաղաք և եկայք դուք առ իս: Եւ կամ՝ ես գամ առ ձեզ, և տամ ձեզ աւգնութիւն ՀԹ ոգի, և խորհմք ի միասին, եթէ զինչ արժան իցէ ատենել»:

Աղծատված բնագրի ճշգրտմամբ գիտությանը հայտնի է դառնում մի կարևոր փաստ հայ բյուզանդա-արարական հարաբերությունների պատմությունից: Պարզվում է, որ բյուզանդական կայսր Կոնստանդ II-ը, ձգտելով փրկել կայսրության գիրքը Անդրկովկասում, որոշել է խափանել հայ-արարական պայմանագիրը: Այդ ծրագիրն իրագործելու համար նա հատկացրել է 70.000-անոց մի մեծ զորաբանակ:

Թեոդորոս Ռշտունին, իհարկե, չհամաձայնվեց Կոնստանդի հետ և ապստամբեց նրա 100.000-անոց զորքի դեմ, որը կայսեր ղեկավարությամբ ներխուժել էր Հայաստան՝ ապստամբությունը ճնշելու համար: Բյուզանդացի բռնակալի մտադրությունը, սակայն, չիրագործվեց: Այդ պատճառով էլ նա Հայաստանից վերադարձավ ընկճված. *απετυχε γὰρ Ἀρμενίας υπερεστρέ-*

ՄԻ ՏԵՂԱՆՎԱՆ ՎԵՐԱԿԱՆԿՆՈՒՄ

(Դեղք — Γελαί)

Բյուզանդացի կայսր Կոնստանդ II-ի թագավորության 13-րդ տարում (655 թ.) Մարաց աշխարհի անառիկ ամրոցներում և անմատչելի լեռներում ապրած ցեղերը ապստամբում են արար նվաճողների դեմ և նրանց դուրս բռնում իրենց սահմաններից: Այս հաղթական ապստամբության նկարագրությունը պահպանվել է գեպրերին ժամանակակից մի սկզբնաղբյուրում՝ «Սերեոսի Պատմությունում»:

Այստեղ, սակայն, գրչական թյուրիմացության պատճառով աղծատվել և կորել է մի երկրի անուն, որը արարներին բոլորովին չնազանդված ցեղերից մեկի հայրենիքի անունն է եղել: Կորուստը տեղի է ունեցել հետևյալ հատվածում. «Իրրե ետես բազմութիւն զարացն Իսմայելի, եթէ ոչ յաջողի նոցա գործն ի կողմանէ ամուր լերանցն Մարաց, քանզի ոչ իսկ նուաճեցան ի ծառայութիւն նոցա Կեթրուս և Սկիութեայ, որ են ԴԵՏԴ Դելումք, հանդերձ ամենայն ամբարնակ բազմութեամբն,— և բազումք ծախեցան՝ յամուրս և ի խորածորս գահավէժ լինելով... զէմ եզին երթալ ի կողմանս հիւսիսոյ... չեզան հասան ի կապանս ճորայ»¹:

Ըստ աղծատված բնագրի, Կեթրուսը և Սկյութեան գետերի անուններ են.— «Կեթրուս և Սկիութեայ, որ են գետք Դելումք»²: Բնագիրն այսպես են հասկացել նաև Ք. Պատկանյանը (Кедрус и Скютія—реки Делум²), Ն. Հյուրշմանը (Kethrus und Skiutheay,

¹² «Սերեոսի Պատմություն», Երևան, 1939, էջ 107:

¹³ Սերեոս, էջ 110:

¹⁴ Հովհաննես Երասխանակերտցի, Թիֆլիս, 1912, էջ 82:

¹⁵ Սերեոս, էջ 155:

¹⁶ Նույն տեղում, էջ 90:

¹⁷ Theopanis Chronographia, vol. I, Bonnae, MDCCCXXXIX, էջ 527:

¹ «Սերեոսի Պատմություն», Երևան, 1939, էջ 131:

² «История императора Иракла», сочинение Себеоса, էջ 164: Այստեղ Ք. Պատկանյանը ծանոթագրել է. «Բնագրում այս տեղը այնքան էլ հասկանալի չէ»:

die Flüsse der Delum³), Ֆ. Մակլերը (ie Kethrus et le Skiwthéay, les fleuves des Delums⁴), Ստ. Մալխասյանցը (Кетрук и Скюття. делумские реки⁵): Այսպես էլ ընդունված է ընդհանուր գիտություն կողմից:

Մեր բերած հստակ թուվանդակությունից, սակայն, որոշակիորեն էրևում է, որ «Կեթրուս»-ը և «Սկիթիա»-ն գետեր չեն: Գետերի մասին հեղինակը չէր ասի «ոչ իսկ նուանյան ի ծառայություն նոցա... հանդերձ ամենայն ամրարնակ բազմութեամբն»: Այստեղ խոսքը երևորների մասին է, որոնք իրենց ամբողջ ամրարնակ բնակչությամբ շահագանդվեցին իսմայելիներին: Գետերը բնակչություն չէին ունենա և ոչ էլ ծառայության կմտնեին որևէ իշխողի տիրապետության տակ:

Հին աշխարհի բարտեզի վրա հիշյալ անուններով գետեր չկան: Ընդհակառակը, գոյություն են ունեցել Գեդրոսիա (= Կեթրուս) և Սկիթիա երկրներ: Գեդրոսիան (Γεδρωσις) Պլուտարքոսի մոտ հիշատակվում է որպես պարսից տերության հարավ-արևելյան նահանգ: Հերոդոտոսը նույնպես պարսից ցեղերի շարքում հիշատակում է դերուսիացիներին, որոնց անունից, ինչպես ենթադրում է Վ. Բարտոլդ⁶, առաջացել է Պարսկաստանի հարավ-արևելյան Գեդրոսիա նահանգի անունը: Իսկ «Սկիթիայ»-ը ակնհայտորեն սկյութացիների աշխարհն է, որը տարրեր ժամանակներում ունեցել է տարրեր սահմաններ և հին հայկական աղբյուրներում հենց այդպես էլ կոչվում է՝ «Սկիթիա»:

«Սերենոսի Պատմությունում» հիշատակված են այս՝ Կեթրուս և Սկյութիա երկրները: Այսպիսով, կասկածից վեր է, որ «Կեթրուս և Սկիթիայ, որ են գետեր Դելումը» արտահայտության մեջ սկզբնական ընթացքում «գետ» բառի փոխարեն եղել է մեկ ուրիշ բառ: Այդ բառը գտնելու համար մեզ օգնության է գալիս ամենից առաջ նրա կողքին գտնվող Դելումը տեղանունը: Սա Կասպից ծովի հարավ-արևելյան մասում գտնված Դելում (Դելյամ) նահանգն է, որի սահմանները գտնվել են Պարսկաստանում, Գիլանի կազմում: Գիլանն իր անունն ստացել է այդ երկրում ապրած Դեղ ցեղից, որին հիշատակում են Պլուտարքոսը (Γελαι), Պլինիոսը (Γελαι) և ուրիշները: Հայկական աղբյուրները հաճախ Գել (Գեղ) և Դելում (Դեղում, Դիղում, Դելում) անունները հիշատակում են միասին: «Սերենոսի Պատմությունում» սրբագրվող արտահայտությունից մի պարբերություն առաջ հիշվում է «Դելն (= Գեղն) և Դելումն»⁸: Այսպես է (հղումված ձևով՝ «Գեղաբ և Դիղմով») նաև Անանիա Շիրակացուն վերագրվող «Աշխարհացույցում»⁹:

Պտղոմեոսի բարտեզում նույնպես Գեղը և Դելումը երկրները նշված են եղել միասին. Κατατοι. Καρχοῦδα, Γελαι (= Գեղը), Δριζουχες (= Դիլումը)¹⁰: Նույնը հանդիպում ենք նաև Մովսես Խորենացու անվամբ հրատարակված «Աշխարհացույցի» մի տարրերակում «Գելը, Դիլումը»¹¹: (Այստեղ Սկյութիայի նույնպես ամենուրեք նշված է «Սերենոսի Պատմության» մեջ հանդիպող ձևով՝ «Սկիթիա»¹² և Եղիշեն դրում է «զգուհեն... Գեղաց»¹³:

Հ. Հյուրշմանը ցույց է տվել, որ «Սերենոսի Պատմության» մեջ ամենուրեք «Գեղում» անունը փոխարինում է Դելումին (= Դեղում), իսկ մեր կողմից սրբագրվող հատվածից մեկ

³ H. Hübschmann. Zur Geschichte Armeniens, S. 39. Այստեղ Հյուրշմանը հարցական է դրել ընդվող արտահայտության վրա:

⁴ „Histoire d'Héraclius“, էջ 1. év. Sebeos, էջ 144:

⁵ „История Себеоса“, Ереван, 1939, էջ 120:

⁶ В. Бартольд, Историко-географический обзор Ирана. С.П.-бург, 1903, էջ 92, հմտ. նաև էջ 99:

⁷ Barbier de Meynard, Dictionnaire géographique, historique et littéraire de la Perse et des contrées adjacentes, Paris, MDCCCLXI (=1861), էջ 690:

⁸ Սերենոս, էջ 150:

⁹ Աշխարհադիր հատած երկրորդ, տպված՝ Ա. Գ. Արրահամյան, Անանիա Շիրակացու ժամանադրությունը, Երևան, 1944, էջ 340:

¹⁰ Ptolemaeus, VI, 2, 5. Հմտ. „Geographie de Moïse de Corène“, d'après Ptolemée, texte arménien, traduit en français par le P. Arsène Soukry. Mèkhitariste, Venise, 1881, էջ 54, An. 1.

¹¹ «Աշխարհացույց Մովսեսի Խորենացու, յաւելուածովք նախնեաց», Վենետիկ, 1881, էջ 41:

¹² Նույն տեղում, էջ 41, 42, 43:

¹³ «Եղիշէի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեան, Երևան, 1957, էջ 115—116:

պարբերություն վերը հանդիպող «Դելն և Դելումն»-ի փոխարեն պետք է կարդալ «Դեղն և Դելումն»¹⁴:

Իրար փոխարինող Դել > Դել ձևերը հանդիպում են նաև արաբական աղբյուրներում, որտեղ Դիլանի (Cuilân) անունը գրվում է նաև Դիլան (Djilan) դրությամբ¹⁵:

Նշված փաստերի հիման վրա պարզվում է, որ «Կեթրուս և Սկիթեայ, որ են գետն Դելումք» արտահայտության մեջ գետն բառի փոխարեն սկզբնապես եղել է Դեղն, որը ինչպես մեր մյուս աղբյուրներում, այնպես էլ «Սերեոսի Պատմության» մեջ նշված է Դելումի կողքին՝ «Դեղք, Դելումք»:

Ես ապացուցվում է նաև սրբագրվող հատվածից թիշ վերը հաղորդվող այն տեղեկությամբ, ըստ որի՝ մարերն ապստամբությունն սկսելիս իրենց հույսը դրել էին ինչպես մարաց անառիկ լեռների, այնպես էլ Դել (=Դեղք) և Դելում երկրների քաջ ընակիչների վրա: «Ապստամբեցան մարք ի ծառայութենէն Իսմայելի... ապաւն և թիկունս իւրեանց արարին զամուրս աշխարհին մարաց... շփիր և զքաջ ազգացն զարութիւնս, որ բնակեալ էին ի նոսա, Դելն և Դելումն»¹⁶: Ահա այս նույն Դել և Դելում երկրների քաջ ընակիչներն են, որ սրբագրվող հատվածում չեն հնազանդվել արարներին: «Կեթրուս և Սկիթեայ, Դեղք, Դելումք»:

Դեղք երկրի անունն ընկալելով որպես «գետք» (=գետեր) բառ, ընդօրինակող գրիչը կարծել է, թե այդ բառից առաջ հիշատակված Կեթրուս և Սկիթեայ անունները Դելումի գետերի անուններն են, այդ պատճառով էլ նա ավելացրել է «որ են» (որ էն գետք) արտահայտությունը, որպեսզի դրանով «գետք Դելումք»-ը կապի «Կեթրուս և Սկիթեայի» հետ:

Այս ներմուծումը կարող էր կատարվել միայն և միայն հետագա ժամանակներում ապրած մի գրչի կողմից, որի համար արդեն անձանոթ էին ինչպես Դեղք, այնպես էլ Կեթրուս և Սկիթեայ անունները: «Սերեոսի Պատմության» հեղինակի ապրած ժամանակ այս անունները դեռ գործածության մեջ էին, ուստի և այս հեղինակը քաջ գիտեր, որ Կեթրուս, Սկիթեա, Դել, Դելում երկրներն իրարից տարբերվող երկրներ էին, որոնց սահմանները Հայաստանից այնքան էլ հեռու չէին (Կեթրուսը գտնվում էր հարավարևելյան Իրանում, այժմյան Բելուջիստանում, իսկ մնացածները՝ Կասպից ծովի շրջակայքում):

«Սերեոսի Պատմության» հեղինակի համար թերևս փոքր-ինչ անհասկանալի կարելի է համարել Կեթրուսի հիշատակությունը: Այս երկիրը հարևան չէր մյուսներին, գտնվում էր Իրանի հարավային սահմանների մոտ, ուստի և նրա հիշատակությունը այստեղ կարծես թե անսպասելի է: Կարելի է մտածել, թե Կեթրուսն այստեղ փոխարինում է կադուս (կեդուս) անվանը, որով կոչվում էր հենց Դեղք, Դելում և Սկիթեա երկրների հետ անմիջական հարևանության մեջ գտնվող մի ցեղ: Ներկա Դիլանում ապրած այս ցեղին պատկանողները կոչվել են կեդուսներ, կադուսներ, կադիչք (Καδουσαι, Καδυσται, Cadseul, Cadusii)¹⁷: Նրանց հիշատակում են Հերոդոտոսը, Ստրաբոնը, Պլուրինոսը, Պլինիոսը, Դիոդորոս Սիկիլացին, Հեսուս Ասորի Սյունակյացը և ուրիշներ, հայ մատենագիրներից՝ Ղազար Փարպեցին, Եղիշեն («կատիչք»), յոթերորդ դարի «Աշխարհացոյց»-ի հեղինակը («կադիչք»¹⁸) և այլ մատենագիրներ:

Կադուսները եամ կեդուսները հաճախ հանգես են եկել սկյութացիների հետ միասին, իսկ Պլուտարքոսը կադուսների հայրենակից գիլերին (Γελαι, Γελαι) համարում է սկյութացիներ: Դիոդորոս Սիկիլացին գրում է. «Ապա հրամայեալ երկու հազար Կատուսեաց և հազար ընտիր հեծելոց Սկիւրացոց՝ պատեալ զթևով թշնամեաց՝ յարձակիլ ի վերայ աղխին և տիրել ծանրութեանց նորա»¹⁹:

¹⁴ H. Hubschmann, Armentische Grammatik, I T., Arm. Etymologie, I Abt., die persischen und arabischen Lehnwörter in Altarmenischen, Leipzig, 1895, էջ 34--35:

¹⁵ B. D. Meynard, նշվ. աշխ., էջ 187:

¹⁶ «Սերեոսի Պատմություն» էջ 130:

¹⁷ Հմմտ. «Прокопия Кесарийского История войн римлян с персами». Перев. с греческого Спиридона Дестуниса, С.П.-бург, 1876, էջ 177, նաև՝ Th. Nöldeke, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden, Aus der arabischen Chronik des Tabari..., Leiden, 1879, էջ 479:

¹⁸ Այս մասին տե՛ս «Geographie de M. de Corène», trad. P. A. Soukry, էջ 12--13:

¹⁹ «Պատմութիւն մեծին Աղէքսանդրի Մակեդոնացոյ», թրգմ. Գարրիել Ս. վ. Պատկանեանց, Աստրախան, 1827, էջ 115:

Ինչպես տեսնում ենք, սկյութացիների հետ հարեանություն մեջ գտնված «կաղուն» («կե-տուն») ցեղը կարող էր շփոթվել «Կեթրուն»-ի հետ և «Սերեոսի Պատմության» մեջ տեղ գրավել Սկիթեայի կողքին: Կարող էր նաև պատահել, որ այս Պատմության հեղինակը նկատի ունեցած լիներ հենց Կեթրունը, անկախ այն բանից, որ այս երկիրը հարևան չէր մյուսներին: Մեզ համար կարևորն այն է, որ «Սերեոսի Պատմության» հեղինակը ծանոթ էր իր ժամանակակից այս երկրներին և չէր կարող նրանց համարել գետեր և գրել. «Կեթրուն և Սկիթեայ, որ են գետը Դելումը»:

«Գետը» բառի փոխարեն «Գեղը» տեղանվան վերականգնումով վերացվում է ևս մի գրչական թյուրիմացություն հայ հին սկզբնաղբյուրներում, որոնք դարերի ընթացքում բազմիցս արտագրվելով ենթարկվել են զանազան աղճատումների:

«ՄԻՆՉԵՒ ՑԱՅՍԱԽԻ ԺԱՄԱՆԱԿԻ»

«Սերեոսի Պատմության» հեղինակն իր երկի Ե—է գլուխներում ամփոփ կերպով շարադրում է Հայաստանի պատմությունը, սկսած Վարդան Մամիկոնյանի ապստամբությունից մինչև Որմիզդ Դ-ի թագավորությունը Պարսկաստանում: Դրանից հետո թվարկում է այն պարսիկ զորավարներին, որոնք Հայաստան են եկել այդ ժամանակամիջոցում, այսինքն Վարդանից Որմիզդ ընկած տարիների ընթացքում:

Այս տեղեկությունը հաղորդելիս հեղինակը գործածում է մի արտահայտություն՝ «մինչև ցայսօր ժամանակի», որին եթե հավատանք, Որմիզդը և «Սերեոսի Պատմության» հեղինակը ժամանակակիցներ են:

Սա բացահայտ թյուրիմացություն է, որովհետև Որմիզդը սպանվել է 590 թ., իսկ «Սերեոսի Պատմությունը» գրված է դրանից առնվազն 71 տարի հետո, 661 թ. (աշտեղ հիշատակված են 661 թ. կատարված դեպքեր): Ուրեմն «Սերեոսի Պատմության» հեղինակը և Որմիզդ Դ-ն ժամանակակիցներ չեն: Եվ ոչ ոք էլ այդ կարծիքին չի եղել: Մնում է բացատրել թյուրիմացությունը:

Այսպիսով՝ «ցայսօր ժամանակի» արտահայտությունը մեզ ներկայանում է որպես բացարձակ գրչական աղավաղում, որը տեղ է գտել «Սերեոսի Պատմության» հետևյալ հատվածում. «Եւ թագաւորէ Որմիզդ որդի նորա (Անուշ Բռուանայ—, . Ա.) յետ նորա Եւ արդ այս են զաւրաւոր արքային Պարսից, որ եկին մի րստ միոջէ յերկիրս Հայոց՝ յապստամբութենէ Վարդանայ Մամիկոնից տեսուն որդոյն Վասակայ, մինչև զայսաւ ժամանակի»¹:

Տեսնում ենք, որ «ցայսաւ ժամանակի» արտահայտությունը վերաբերում է Որմիզդին: Սրա թագավորության ժամանակը նշելուց հետո հայտնվում է, որ Պարսից զորավարները Հայաստան են եկել իրար հաջորդելով՝ «մինչև ցայսաւ ժամանակի», մինչև Որմիզդի ժամանակը: Որովհետև հենց Սերեոսից գիտենք, որ նա Որմիզդի ժամանակակից չէ, ապա մնում է ենթադրել, որ սկզբնական բնագրում «մինչև ցայսաւ ժամանակի» բառերի փոխարեն եղել է «մինչև ցայս ժամանակի» այսինքն՝ «մինչև այս (Որմիզդի) ժամանակը»:

Այդ մասին են վկայում «Սերեոսի Պատմության» մեջ գտնվող նաև մի բանի այլ փաստեր: Այստեղ պարսից զորավարների ցանկը իսկապես հասցված է մինչև Որմիզդի ժամանակը՝ Վերջին զորավարին հիշատակելուց հետո անմիջապես հայտնվում է, որ նրա օրոք է սպանվել Որմիզդը. «Ապա եկն Հրատրին Դատան (սա վերջին զորավարի անունն է—Գ. Ա.) ... Աս սովաւ սպանաւ Որմիզդ»²: Ուրեմն՝ Որմիզդի և վերջին պարսիկ զորավարի ժամանակը նույնն է, հետևաբար և «ցայս ժամանակի» արտահայտությունը վերաբերում է Որմիզդին: Եվ ապա՝ Որմիզդի սպանության տարին նշելուց հետո, հեղինակը գրում է. «Ապա եկին սահմանակալ պարսից»³: Ուրեմն Որմիզդը վերջացավ զորավարների շարքը և «ապա եկին սահմանակալ պարսից», մի փաստ, որով Որմիզդը կապվում է վերջին զորավարի հետ:

Այսպիսով՝ հիմնավորվում է մեր ենթադրությունը, որը ի միջի այլոց, հաստատվում է նաև «մինչև ցայսաւ ժամանակի» արտահայտության մեջ գտնվող «ժամանակի» բառի միջոցով: Եթե «Սերեոսի Պատմության» սկզբնական բնագրում իրոք գործածված լիներ «այսօր» բառը, ապա «ժամանակի»-ն այլևս ավելորդ կլիներ. «Սերեոսի Պատմության» հեղինակը սովորություն ունի ասելու «մինչև ցայսաւ»³ (առանց «ժամանակի» բառն ավելացնելու):

Գ. ԱՐԳԱՐՅԱՆ

¹ Ս Ե Ր Ե Ո Ս, էջ 29:

² Նույն տեղում, էջ 31:

³ Նույն տեղում, էջ 38: